ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Տնտեսագիտության ֆակուլտետում կազմակերպվեց հերթական միջոցառումը: Ֆինանսահաշվային ամբիոնի ավագ դասախոս Արևիկ Ալեքսանյանի նախաձեռնությամբ «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) մասնագիտությամբ 1-ին կուրսի ուսանողները կազմակերպեցին ընթերցումներ՝ ամփոփելով իրենց խմբային աշխատանքները «Ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ» դասընթացից:

Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռ. Մանգասարյանը գոհունակություն հայտնեց ուսանողների ելույթներից՝ ընդգծելով.«Ողջունում եմ նման ձևաչափով միջոցառումների իրականացումը առանձնապես առաջին կուրսեցիների մասնակցությամբ, քանի որ ուսանողները կարողանում են ձեռք բերել տեսական գիտելիքների համակարգման և պատշաճ մակարդակով ներկայացման հմտություններ: Գոհացուցիչ է թիմային աշխատանքը, ինչը հետագայում նաև հասարակությանը ինտեգրվելու նոր հմտություններ է ձևավորելու»:

Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ն. Ավանեսյանը, գոհացուցիչ գնահատելով ուսանողների ելույթները, մասնավորապես նշեց. «Ֆինանսահաշվային ամբիոնը խիստ կարևորում է նման ձևաչափերով խմբային աշխատանքների անցկացումը, քանի որ դասախոսը հասնում է տվյալ դասընթացի շրջանակներում առարկայական նկարագրում ներկայացված վերջնարդյունքներին: Բոլորի ելույթներից շատ գոհ ենք, շարունակեք նման տեմպերով և աշխատեք ձգտել կատարելության»:

«Ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ» դասընթացի դասընթացավար և միջոցառման կազմակերպիչ Ա.Ալեքսանյանի խոսքով՝ շատ հաճելի և հետաքրքիր աշխատանք են կատարել ուսանողները. «Ուսանողներն իրենց դրսևորեցին որպես ապագա ֆինանսիստներ, ովքեր կարողանում են կատարել տեղեկատվության մշակում, խմբավորում, պատշաճ ներկայացում և թիմային աշխատանք»:

Միջոցառման ավարտին ուսանողները շնորհակալություն հայտնեցին դասախոս Ա. Ալեքսանյանին՝ իրենց խմբային աշխատանքը պլանավորելու, համակարգելու և աջակցելու համար:

«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՋՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Անժելա Շահանց,
Լրագրություն 3-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ. (047) 94 04 91

Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Քո ժամանակը

№ 8
ԴԵԿՏԵՄԲԵՐ
2022

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԿԱՐԵՎՈՐ Է ՀԵՏԵՎԵԼ ՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՆ, ՉՏՐՎԵԼ ՍԱԴՐԱՆՔՆԵՐԻ

Վերջին շրջանում կրկին տեղեկատվական դաշտում գերակշռում են ապատեղեկատվությունը, իրարամերժ նորությունները, ադրբեջանական տեղեկատվական դաշտի տարածած նորությունների տիրաժավորումը հայկական մեդիադաշտում: Հակառակորդի տեղեկատվական դաշտի ազդեցությունն ուղիղ ներազդում է մեր հասարակության վրա: Տրվելով էմոցիաների, մանիպուլյացիաների և ներշնչանքի՝ հասարակության շրջանում առաջանում է սթրես, վախ: Խնդրի շուրջ զրուցել ենք տեղեկատվական անվտանգության մասնագետ, մեդիափորձագետ Սամվել Մարտիրոսյանի հետ:

Արցախյան և հայաստանյան լրատվամիջոցներում լեգենդար հրամանատար Ավոյի ծննդյան օրվա հետ կապված տարածվող լուսանկարների ու գրառումների պատճառով մեծ խնդիր է առաջացել, որի արդյունքում ֆեյսբուքյան շատ օգտատերերի էջեր արգելափակվել են: Պատճառն այն է, որ Ֆեյսբուքի ղեկավարությունը հրամանատարին դիտարկում է ոչ թե Արցախի և Հայաստանի հերոս, այլև ԱՍԱԼԱ-ի (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ)-ի ղեկավար: ԱՍԱԼԱ-ն ԱՄՆ Պետական դեպարտամենտի կողմից, ինպես նաև Ադրբեջանի Արտաքին Գործերի Նախարարության կողմից համարվում է ահաբեկչական կազմակերպուռւն: Որպես լուծում՝ Սամվել Մարտիրոսյանը խորհուրդ է տալիս անուններ և նկարներ չօգտագործել, չկատարել հրապարակումներ և գրառումներ:

«Ֆեյսբուքը Արցախը ներառել է Ադրբեջանի մաս, քանի որ ֆեյսբուքյան թիմը օգտվում է հատուկ քարտեզներից, որտեղ կոնկրետ սովետական, խորհրդային քարտեզներ են և , ցավոք, սա մի հարց է, որը լծակ էլ չունի լուծելու»,- ասել է փորձագետը:

Ոչ միայն ֆեյսբուքի, այլև ուրիշ կազմակերպությունների մոտ էլ նույն խնդիրն է: Ըստ նրա՝ բնականաբար, ֆեյսբուքը չի ցանկանում կոնֆլիկտների մասնակից լինել և օգտվում է միայն խորհրդային քարտեզներից:

Վերջերս համացանցում նկատվել է ադրբեջանական գովազդների հաճախակիացում: Առաջին հերթին, սա թիրախավորում է Հայաստանի և Արցախի բնակչությանը՝ ադրբեջանական քարոզչությունը առաջ տանելու համար, երկրորդ՝ դարձյալ այն պատճառով, որ ֆեյսբուքը Արցախը ընկալում է որպես Ադրբեջանի մաս:

Կեղծ ինֆորմացիայի տեղատարափում ճիշտ նորություն փնտրելն ու գտնելը բավականին դժվարացել է: Այն մեդիասպառողները, ովքեր չեն ցանկանում խորանալ փաստերի ստուգման մեջ, փորձագետի խորհրդով՝ կարող են ընտրել մի քանի լրագրող, ովքեր համոզված են, որ անփույթ չեն և ֆիլտրված տեղեկատվություն են հաղորդում, և հետևեն նրանց:

Սադրանքներին մարդ տրվում է, երբ տրվում է իր էմոցիաներին, շտապում է տեսնել նորությունը, իրեն դուր է գալիս կամ դուր չի գալիս. սա էմոցիոնալ դաշտ է: Մասնագետի խորհրդով՝ շատ կարևոր է չտրվել զգացմունքների, ուշադիր լինել, չշտապել դրանցով պայմանավորված եզրահանգումներ անել: Շատ կարևոր է հատկապես արցախյան իրականության մեջ՝ հետևել վստահելի աղբյուրներին, չտրվել սադրանքների, չշտապել, մտածել, փորձել, ստուգել տեղեկատվությունը:

Աննա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ,
Լրագրություն 4-րդ կուրս

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Տնտեսագիտության և բնագիտական ֆակուլտետների ուսանողները «Օտար լեզու» դասընթացի շրջանակում ներկայացրել են ինքնուրույն աշխատանքները:

Միջոցառումը նախաձեռնել էր բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական ամբիոնի դասախոս, մ.գ.թ., դոցենտ Նարինե Դուրասանյանը:

Նպատակն էր ուսանողների շրջանում զարգացնել օտար լեզվից մասնագիտական իմացությունը, կրեատիվ մտածողությունը, սեր առաջացնել օտար լեզուների հանդեպ:

Նման միջոցառումները հնարավորություն են տալիս ուսանողներին օտար լեզվով խոսել, քննարկումներ կատարել, որոնք նպաստում են ուսանողների բազմակողմանի զարգացմանը, հաղորդակցական, լեզվամտածողական կարողությունների զարգացմանը:

ԴԱՍ-ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԶԻԳՄՈՒՆԴ ՖՐՈՅԴԻՆ

Դեկտեմբերի 9-ին ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի նախաձեռնությամբ «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողները մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Իննա Մկրտչյանի նախաձեռնությամբ 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների համար կազմակերպել են դաս-միջոցառում, որը նվիրված էր 20-րդ դարի գիտնականներից մեկին՝ հոգեբան Զիգմունդ Ֆրոյդին:

Միջոցառման կազմակերպիչների խոսքով՝ հոգեվերլուծության հիմնադիր Զ. Ֆրոյդի աշխատությունները մեծ ազդեցություն են ունեցել հոգեբանության, բժշկության, հասարակագիտության, գրականության և արվեստի վրա: Հետաքրքրությունը գիտնականի նկատմամբ չի մարել նաև մեր օրերում: Ի. Մկրտչյանը նշեց, որ ժամանակի հոգեբանական ուսմունքներից ամենաազդեցիկն իսկապես հոգեվերլուծությունն է, որը, բացի կոնկրետ, նեղ հոգեբանական հիմնախնդիրներից, անդրադարձել է նաև մարդաբանական հարցերին՝ դրանով իսկ խթանելով նոր սերունդների իմաստասիրական որոնումները:

Ուսանողները ներկայացրել են Զ. Ֆրոյդի կյանքն ու գործունեությունը, հոգեվերլուծական տեսությունը, հոգեկան զարգացման փուլերը, անձի տիպավորումը, երազների մեկնաբանությունը, Զիգմունդ Ֆրոյդի և Սալվադոր Դալիի մի հանդիպման պատմությունը, կատարել են մեջբերումներ նրա թևավոր խոսքերից:

ԹՎԱՅԻՆ ԲԻԶՆԵՍԸ ԱՐՑԱԽՈՒՄ

ԱրՊՀ Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ դեկտեմբերի 9-ին տեղի է ունեցել «Թվային բիզնեսը Արցախում» թեմայով հանդիպում-քննարկում Արցախում թվային մարքետինգի մասնագետ Դավիթ Գաբրիելյանի հետ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Արցախում թվային մարքետինգի արդի վիճակին և զարգացման միտումներին, ինչպես նաև սոցիալական ցանցերում բիզնես էջերի զարգացմանը:

Հանդիպումը անց է կացվել ինտերակտիվ մեթոդով, բանախոսը պատասխանել է ուսանողներին հետաքրքրող հարցերին, ծավալվել է քննարկում:

ԲՈՒՀ-ԴՊՐՈՑ-ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բուհ-դպրոց-իրավապահ մարմիններ համագործակցության շրջանակներում Ստեփանակերտի N5 միջնակարգ դպրոցում ԱրՊՀ իրավունքի ամբիոնի կողմից 9-րդ դասարանի աշակերտների հետ անց է կացվել «Անչափահասների իրավագիտակցական դաստիարակություն» խորագրով հանդիպում-քննարկում:

«Միջոցառման հիմնական նպատակը դաստիարակչական բնույթ է կրում»,- նշել է Տաթև Գևորգյանը՝ մանրամասնելով, որ միջոցառման նպատակներից են նաև բարձրացնել աշակերտների մոտ ընդհանուր իրավագիտակցական մակարդակը, գնահատել այդ հարցում ուսուցիչների և տեսուչների ջանքերը, ամրապնդել և արժևորել մեր ազգային արժեհամակարգը, ամուր հենք ստեղծել առողջ հասարակության ձևավորման համար:

Նրա խոսքով՝ նման հանդիպումները կկրեն շարունակական բնույթ, և այցելություններ կկազմակերպվեն նաև այլ դպրոցներ: